**ՀՀ ՀԱՏՈՒԿ ՔՆՆՉԱԿԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ԿԱՐԻՔՆԵՐԻ ՀԱՄԱՐ ԳՐԱՍԵՆՅԱԿԱՅԻՆ ՆԱՐՔԱՎՈՐՈՒՄՆԵՐԻ ԵՎ ՆՅՈՒԹԵՐԻ ՄԱՏԱԿԱՐԱՐՄԱՆ ՊԱՅՄԱՆԱԳԻՐ**

**NՀ ՔԾ-ԳՀ ԱՊՁԲ-18/03-1**

ք. Երևան «12» մարտ 2018թ.

«ՀՀ Հատուկ քննչական ծառայության աշխատակազմ» ՊԿՀ-ն ի դեմս աշխատակազմի ղեկավար Դ.Սուքիասյանի, որը գործում է «ՀՀ Հատուկ քննչական ծառայության աշխատակազմ» ՊԿՀ-ի կանոնադրության հիման վրա, այսուհետ «Գնորդ», մի կողմից, և «Սմարթլայն» ՍՊԸ-ն, ի դեմս տնօրեն Տ.Ղարիբյանի, որը գործում է «Սմարթլայն» ՍՊԸ-ի կանոնադրության հիման վրա, այսուհետ «Վաճառող» մյուս կողմից, կնքեցին սույն պայմանագիրը հետևյալի մասին:

## 1. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԱՌԱՐԿԱՆ

1.1. Վաճառողը պարտավորվում է սույն պայմանագրով (այսուհետ՝ պայմանագիր) սահմանված կարգով, ծավալներով, ժամկետներում և հասցեով Գնորդին մատակարարել պայմանագրի N 1 հավելվածով՝ Տեխնիկական բնութագիր-գնման-ժամանակացույցով նախատեսված ապրանքը (այսուհետ՝ ապրանք), իսկ Գնորդը պարտավորվում է ընդունել ապրանքը և վճարել դրա համար:

## 2. ԿՈՂՄԵՐԻ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԸ ԵՎ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

**2.1 Գնորդն իրավունք ունի՝**

2.1.1 Ապրանքը պայմանագրով սահմանված ժամկետում Վաճառողի կողմից չմատակարարելու դեպքում հրաժարվել ապրանքից, եթե մատակարարման ժամկետները խախտվել են <u>15</u> օրից ավելի:

2.1.2 Եթե հանձնվել է անպատշաճ որակի՝ պայմանագրով նախատեսված տեխնիկական բնութագրին չհամապատասխանող ապրանք՝

ա) պահանջել հատուցելու ապրանքի անպատշաճ որակի լինելու պատճառով իր կատարած ծախսերը.

բ) չընդունել ապրանքն՝ իր հայեցողությամբ սահմանելով անպատշաճ որակի ապրանքը պայմանագրին համապատասխանող որակի ապրանքով անհատույց փոխարինման ողջամիտ ժամկետ և պահանջել Վաճառողից վճարելու պայմանագրի 6.3 կետով նախատեսված տուգանքը.

գ) հրաժարվել պայմանագիրը կատարելուց և պահանջել վերադարձնելու ապրանքի համար վճարված գումարը:

2.1.3 Եթե հանձնվել է պայմանագրով որոշվածից պակաս քանակի ապրանք, ապա՝

ա) պահանջել լրացնելու ապրանքի պակաս հանձնված քանակը,

բ) հրաժարվել հանձնված ապրանքից և դրա համար վճարելուց, իսկ եթե ապրանքի համար վճարվել է, ապա պահանջել վերադարձնելու վճարված գումարը և վճարելու պայմանագրի 6.2 կետով նախատեսված տույժը:

2.1.4 Եթե հանձնվել է տեսակի պայմանի խախտմամբ ապրանք, իր ընտրությամբ՝

ա) ընդունել տեսակի վերաբերյալ պայմանին համապատասխանող ապրանքը և հրաժարվել մնացած ապրանքներից.

բ) հրաժարվել հանձնված բոլոր ապրանքներից և պահանջել վճարելու պայմանագրի 6.2 կետով նախատեսված տույժը.

գ) պահանջել տեսակի վերաբերյալ պայմանին չհամապատասխանող ապրանքի անհատույց փոխարինում պայմանագրով նախատեսված տեսակին համապատասխան ապրանքով:

2.1.5 Վաճառողի կողմից մատակարարման ժամկետների խախտման դեպքում իր հայեցողությամբ սահմանել ապրանքի մատակարարման նոր ժամկետ և պահանջել Վաճառողից վճարելու պայմանագրի 6.2 կետով նախատեսված տույժը:

2.1.6 Վաճառողից պահանջել հատուցելու վնասները, եթե Գնորդը Վաճառողի կողմից պարտավորությունը խախտելու հետևանքով պայմանագրի լուծումից հետո ողջամիտ ժամկետում այլ անձից ավելի բարձր, սակայն ողջամիտ գնով գնել է ապրանք՝ պայմանագրով նախատեսվածի փոխարեն՝ պայմանագրով սահմանված և դրա փոխարեն կնքված գործարքի գների միջև տարբերության չափով, ինչպես նաև ապրանքն այլ անձից ձեռք բերելու համար իր կատարած բոլոր անհրաժեշտ և ողջամիտ ծախսերը:

2.1.7 Միակողմանի լուծել պայմանագիրը (լրիվ կամ մասնակի), եթե Վաճառողն էականորեն խախտել է պայմանագիրը.

2.1.7.1 Վաճառողի կողմից պայմանագիրը խախտելն էական է համարվում, եթե՝

ա) մատակարարվել է անպատշաճ որակի ապրանք որը չի կարող փոխարինվել Գնորդի համար ընդունելի ժամկետում.

բ) ապրանքի մատակարարման ժամկետները խախտվել են <u>15</u> օրից ավելի,

2.1.8 Զննել ապրանքը և հայտնաբերված թերությունների մասին անհապաղ տեղեկացնել Վաճառողին:

**2.2 Գնորդը պարտավոր է՝**

2.2.1 Կատարել պայմանագրին համապատասխան մատակարարված ապրանքի ընդունումն ապահովող բոլոր անհրաժեշտ գործողությունները:

2.2.2 Վաճառողի հանձնած ապրանքից պայմանագրին համապատասխան հրաժարվելու դեպքում, ապահովել այդ ապրանքի պատասխանատու պահպանությունը և դրա մասին անհապաղ տեղեկացնել Վաճառողին:

2.2.3 Պայմանագրով նախատեսված կարգով և ժամկետներում մատակարարված ապրանքն ընդունելու դեպքում Վաճառողին վճարել վերջինիս վճարման ենթակա գումարները, իսկ վճարման ժամկետի խախտման դեպքում՝ նաև պայմանագրի 6.5 կետով նախատեսված տույժը:

2.2.4 Ապրանքի քանակի, տեսականու, որակի մասին պայմանագրի պայմանները խախտելու մասին Վաճառողին ծանուցել թերությունը հայտնաբերելուց հետո անմիջապես կամ այն բանից հետո՝ ողջամիտ ժամկետում, երբ պայմանագրի համապատասխան պայմանի խախտումը պետք է հայտնաբերված լիներ՝ ելնելով ապրանքի բնույթից և նշանակությունից:

2.2.5 Պայմանագրի 2.3.4 կետի համաձայն պայմանագրի լուծումից հետո Վաճառողին հատուցել վերջինիս պատճառված և սահմանված կարգով հիմնավորված վնասները:

**2.3 Վաճառողն իրավունք ունի՝**

2.3.1 Գնորդից պահանջել ընդունելու պայմանագրով նախատեսված կարգով, ծավալներով, ժամկետներում և հասցեով մատակարարված ապրանքը:

2.3.2 Գնորդից պահանջել վճարելու պայմանագրով նախատեսված կարգով, ծավալներով, ժամկետներում և հասցեով մատակարարված և Գնորդի կողմից ընդունված ապրանքի համար իրեն վճարման ենթակա գումարները:

2.3.4 Միակողմանի լուծել պայմանագիրը (լրիվ կամ մասնակի), եթե Գնորդն էականորեն խախտել է պայմանագիրը:

2.3.4.1 Գնորդի կողմից պայմանագիրը խախտելն էական է համարվում, եթե բազմիցս խախտվել են ապրանքի համար վճարելու ժամկետները:

2.3.5 Գնորդի համաձայնությամբ վաղաժամկետ մատակարարել ապրանքը:

**2.4 Վաճառողը պարտավոր է՝**

2.4.1 Գնորդին հանձնել ապրանքը՝ պայմանագրով նախատեսված կարգով, ծավալներով, ժամկետներում և հասցեով:

2.4.2 Ապահովել ապրանքի մատակարարումը պայմանագրի 2.1.2 կետի բ) ենթակետին և (կամ) 2.1.5 կետին համապատասխան՝ Գնորդի կողմից սահմանված ժամկետներում:

2.4.3 Գնորդին հանձնել երրորդ անձանց իրավունքներից ազատ ապրանք:

2.4.5 Գնորդին հանձնել պայմանագրով նախատեսված որակի և քանակի ապրանք՝ պայմանագրով նախատեսված ժամկետներում և հասցեով, իսկ Գնորդի պահանջով տրամադրել ապրանքի որակը հավաստող՝ ՀՀ օրենսդրությամբ սահմանված փաստաթղթեր:

2.4.6 Թերի մատակարարում թույլ տալու դեպքում, պայմանագրով նախատեսված կարգով, լրացնել թերի մատակարարվածը:

2.4.7 Հետ տանել Գնորդի կողմից պայմանագրի 2.2.2 կետին համապատասխան՝ պատասխանատու պահպանության ընդունված ապրանքը կամ ողջամիտ ժամկետում տնօրինել այն, ինչպես նաև հատուցել ապրանքը պատասխանատու պահպանության ընդունելու, այն իրացնելու կամ Վաճառողին վերադարձնելու հետ կապված անհրաժեշտ ծախսերը:

2.4.8 Պայմանագրով նախատեսված դեպքերում վճարել պայմանագրի 6.2 և 6.3 կետերով նախատեսված տույժը և տուգանքը:

2.4.9 Գնորդին հանձնել ապրանքի պատկանելիքները և համապատասխան փաստաթղթերը:

2.4.10 Պայմանագրի 2.1.7 կետի համաձայն պայմանագրի լուծումից հետո Գնորդին հատուցել վերջինիս պատճառված և սահմանված կարգով հիմնավորված վնասները:

2.4.11 Պայմանագրի կատարման ապահովման գործողության ընթացքում լուծարման կամ սնանկացման գործընթաց սկսելու դեպքում դրա մասին նախապես գրավոր տեղեկացնել Գնորդին:

## 3. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԳԻՆԸ ԵՎ ՎՃԱՐՄԱՆ ԿԱՐԳԸ

3.1 Պայմանագրի գինը կազմում է **3382155**(երեք միլիոն երեք հարյուր ութսունութերկու հազար մեկ հարյուր հիսունհինգ)ՀՀ դրամ, ներառյալ ԱԱՀ-ն: Պայմանագրի գինը ներառում է պայմանագրի կատարումն ապահովելու նպատակով Վաճառողի կողմից կատարվելիք բոլոր վճարները (ծախսերը), այդ թվում՝ հարկերը, տուրքերը, փոխադրման, ապահովագրման ծախսերը, պարգևավճարները և ակնկալվող շահույթը:

Ապրանքի մատակարարման գինը կայուն է և Վաճառողն իրավունք չունի պահանջել ավելացնելու, իսկ Գնորդը նվազեցնելու այդ գինը:

3.3 Գնորդն իրեն մատակարարված ապրանքի դիմաց վճարում է ՀՀ դրամով անկանխիկ՝ դրամական միջոցները Վաճառողի հաշվարկային հաշվին փոխանցելու միջոցով: Դրամական միջոցների փոխանցումը կատարվում է հանձնման-ընդունման արձանագրության հիման վրա՝ պայմանագրի վճարման ժամանակացույցով (հավելված N 2)

նախատեսված չափերով և ամիսներին: Եթե արձանագրությունը կազմվում է տվյալ ամսվա 20-ից հետո և այդ ամսում վճարման ժամանակացույցով նախատեսված են ֆինանսական միջոցներ, ապա վճարումն իրականացվում է մինչև 30աշխատանքային օրվա ընթացքում, բայց ոչ ուշ, քան մինչև տվյալ տարվա դեկտեմբերի 20-ը:

## 4. ԱՊՐԱՆՔԻ ՈՐԱԿԸ ԵՎ ԵՐԱՇԽԻՔԸ

4.1 Վաճառողը երաշխավորում է մատակարարված ապրանքի որակի համապատասխանությունը պետական ստանդարտի պահանջներին:

4.2 Հիմնական միջոց հանդիսացող ապրանքների համար երաշխիքային ժամկետ է սահմանվում Գնորդի կողմից ապրանքն ընդունվելու օրվան հաջորդող օրվանից հաշված **365** օրացուցային օրը: Եթե երաշխիքային ժամկետի ընթացքում ի հայտ են եկել մատակարարված ապրանքի թերություններ, ապա Վաճառողը պարտավոր է իր հաշվին, Գնորդի կողմից սահմանված ողջամիտ ժամկետում վերացնել թերությունները:

## 5. ԱՊՐԱՆՔԻ ՀԱՆՁՆՈՒՄԸ ԵՎ ԸՆԴՈՒՆՈՒՄԸ

5.1Մատակարարված ապրանքն ընդունվում է Գնորդի և Վաճառողի միջև հանձնման-ընդունման արձանագրության ստորագրմամբ: Ապրանքը Գնորդին հանձնելու փաստը ֆիքսվում է Գնորդի և Վաճառողի միջև երկկողմ հաստատված փաստաթղթով՝ նշելով փաստաթղթի կազմման ամսաթիվը:

Մինչև պայմանագրով ապրանքի մատակարարման համար նախատեսված օրը ներառյալ Վաճառողը Գնորդին է տրամադրում իր կողմից ստորագրված՝ ապրանքը Գնորդին հանձնելու փաստը ֆիքսող փաստաթուղթը (հավելված N 3.1), իսկ էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով (գործողության իրականացման ձեռնարկը տեղադրված է www.procurement.am հասցեով գործող կայքի «էլեկտրոնային գնումներ» բաժնում)՝ նաև հանձնման-ընդունման արձանագրությունը (հավելված N 3): Ընդ որում Վաճառողը հանձնման-ընդունման արձանագրությունը չի կնքում, հաստատում է էլեկտրոնային ստորագրությամբ՝ լրացնելով միայն այն սյունակները, որոնք վերաբերում են իր տվյալներին (լրացման կարգը տեղադրված է www.procurement.am հասցեով գործող կայքի «Օրենսդրություն» բաժնի «Ֆինանսների նախարարի հրամաններ» ենթաբաժնում):

5.2Եթե մատակարարված ապրանքը համապատասխանում է պայմանագրի պայմաններին, Գնորդը պայմանագրի 5.1 կետում նշված փաստաթղթերը ստանալու օրվան հաջորդող աշխատանքային օրվանից հաշված **4**աշխատանքային օրվա ընթացքում ստորագրում և էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով Վաճառողին է տրամադրում իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման արձանագրությունը և դրա ստորագրման համար հիմք հանդիսացած դրական եզրակացությունը:

5.3 Եթե մատակարարված ապրանքը կամ դրա մի մասը չի համապատասխանում պայմանագրի պայմաններին, ապա Գնորդը չի ստորագրում հանձնման-ընդունման արձանագրությունը և պայմանագրի 5.2 կետում նշված ժամկետում էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով Վաճառողին հետ է վերադարձնում հանձնման-ընդունման արձանագրությունը և դրա չստորագրման համար հիմք հանդիսացած բացասական եզրակացությունը: Սույն կետի կիրառման դեպքում Գնորդըձեռնարկում է նման իրավիճակի համար պայմանագրով նախատեսված միջոցները և Վաճառողի նկատմամբ կիրառում է պայմանագրով նախատեսված պատասխանատվության միջոցներ:

5.4 Եթե պայմանագրի 5.2 կետով սահմանված ժամկետում Գնորդը չի ընդունում մատակարարված ապրանքը կամ չի մերժում դրա ընդունումը, ապա մատակարարված ապրանքը համարվում է ընդունված և պայմանագրի 5.2 կետով սահմանված վերջնաժամկետին հաջորդող աշխատանքային օրը Գնորդը էլեկտրոնային գնումների համակարգի միջոցով Վաճառողին է տրամադրում իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման արձանագրությունը:

## 6. ԿՈՂՄԵՐԻ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅՈՒՆԸ

6.1 Վաճառողը պատասխանատվություն է կրում հանձնած ապրանքի որակի և պայմանագրով նախատեսված մատակարարման ժամկետների պահպանման համար:

6.2 Վաճառողի կողմից պայմանագրով նախատեսված ապրանքի մատակարարման ժամկետների խախտման դեպքում Վաճառողից յուրաքանչյուր ուշացված օրվա համար գանձվում է տույժ՝ մատակարարման ենթակա, սակայն չմատակարարված ապրանքի գնի 0,05 (զրո ամբողջ հինգ հարյուրերորդական) տոկոսի չափով:

6.3 Պայմանագրի 1.1 կետում նշված տեխնիկական բնութագրին չհամապատասխանող ապրանք մատակարարելու յուրաքանչյուր դեպքում Վաճառողից գանձվում է տուգանք՝ պայմանագրի գնի 0,5 (զրո ամբողջ հինգ տասնորդական) տոկոսի չափով:

6.4 Պայմանագրի 6.2 և 6.3 կետերով նախատեսված տույժը և տուգանքը հաշվարկվում և հաշվանցվում են Վաճառողին վճարման ենթակա գումարների հետ:

6.5 Գնորդի կողմից պայմանագրի 3.3 կետով նախատեսված ժամկետի խախտման համար Գնորդի նկատմամբ յուրաքանչյուր ուշացված օրվա համար հաշվարկվում է տույժ՝ վճարման ենթակա, սակայն չվճարված գումարի 0,05 (զրո ամբողջ հինգ հարյուրերորդական) տոկոսի չափով:

6.6 Պայմանագրով չնախատեսված դեպքերում կողմերն իրենց պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու համար պատասխանատվություն են կրում ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով:

6.7 Տույժերի և (կամ) տուգանքի վճարումը Կողմերին չի ազատում իրենց պայմանագրային պարտավորությունները լրիվ կատարելուց:

### 7. ԱՆՀԱՂԹԱՀԱՐԵԼԻ ՈՒԺԻ ԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆԸ (ՖՈՐՍ-ՄԱԺՈՐ)

Պայմանագրով պարտավորություններն ամբողջությամբ կամ մասնակիորեն չկատարելու համար կողմերն ազատվում են պատասխանատվությունից, եթե դա եղել է անհաղթահարելի ուժի ազդեցության հետևանքով, որը ծագել է սույն պայմանագիրը կնքելուց հետո, և որը կողմերը չէին կարող կանխատեսել կամ կանխարգելել: Այդպիսի իրավիճակներ են երկրաշարժը, ջրհեղեղը, հրդեհը, պատերազմը, ռազմական և արտակարգ դրություն հայտարարելը, քաղաքական հուզումները, գործադուլները, հաղորդակցության միջոցների աշխատանքի դադարեցումը, պետական մարմինների ակտերը և այլն, որոնք անհնարին են դարձնում սույն պայմանագրով պարտավորությունների կատարումը: Եթե արտակարգ ուժի ազդեցությունը շարունակվում է 3 (երեք) ամսից ավելի, ապա կողմերից յուրաքանչյուրն իրավունք ունի լուծել պայմանագիրը՝ այդ մասին նախապես տեղյակ պահելով մյուս կողմին:

### 8. ԱՅԼ ՊԱՅՄԱՆՆԵՐ

8.1 Պայմանագիրն ուժի մեջ է մտնում Կողմերի ստորագրման պահից և գործում է մինչև կողմերի՝ պայմանագրով ստանձնած պարտավորությունների ողջ ծավալով կատարումը:

Պայմանագրով նախատեսված կողմերի իրավունքների և պարտականությունների կատարման պայման է հանդիսանում պայմանագիրը ՀՀ ֆինանսների նախարարության կողմից հաշվառված լինելու հանգամանքը:

8.2 Պայմանագրից ծագած՝ կողմի վճարային պարտավորությունը չի կարող դադարել այլ պայմանագրից ծագած՝ հակընդդեմ պարտավորության հաշվանցով, առանց կողմերի գրավոր և կնիքով հաստատված համաձայնության: Պայմանագրից ծագած պահանջի իրավունքը չի կարող փոխանցվել այլ անձի, առանց պարտապան կողմի գրավոր համաձայնության:

8.3 Այն դեպքում, երբ օրենքով նախատեսված կարգով օրենքի պահանջների կատարման նկատմամբ հսկողության կամ վերահսկողության կամ բողոքների քննության արդյունքում արձանագրվում է, որ պայմանագիրը կնքելու նպատակով կազմակերպված գնման գործընթացում, մինչև պայմանագրի կնքումը, Վաճառողը ներկայացրել է կեղծ փաստաթղթեր (տեղեկություններ և տվյալներ), կամ վերջինիս ընտրված մասնակից ճանաչելու մասին որոշումը չի համապատասխանում Հայաստանի Հանրապետության օրենսդրությանը, ապա այդ հիմքերն ի հայտ գալուց հետո Գնորդը իրավունք ունի միակողմանիորեն լուծելու պայմանագիրը, եթե արձանագրված խախտումները մինչև պայմանագրի կնքումը հայտնի լինելու դեպքում գնումների մասին Հայաստանի Հանրապետության օրենսդրության համաձայն հիմք կհանդիսանային պայմանագիրը չկնքելու համար: Ընդ որում, Գնորդը չի կրում պայմանագրի միակողմանի լուծման հետևանքով Վաճառողի համար առաջացող վնասների կամ բաց թողնված օգուտի ռիսկը, իսկ վերջինս պարտավոր է Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված կարգով փոխհատուցել իր մեղքով Գնորդի կրած վնասներն այն ծավալով, որի մասով պայմանագիրը լուծվել է:

8.4 Պայմանագրի հետ կապված վեճերը ենթակա են քննության Հայաստանի Հանրապետության դատարաններում:

8.5 Պայմանագրում փոփոխություններ և լրացումներ կարող են կատարվել միայն Կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ համաձայնագիր կնքելու միջոցով, որը կհանդիսանա պայմանագրի անբաժանելի մասը:

Արգելվում է պայմանագրում, իսկ եթե պայմանագրի գինը գործոնային է, ապա նաև այդ պայմանագրին կից հաջորդող յուրաքանչյուր տարիներին կնքված համաձայնագրում կատարել այնպիսի փոփոխություններ, որոնք հանգեցնում են գնվող ապրանքի ծավալների կամ ձեռք բերվող ապրանքի միավորի գնի կամ պայմանագրի գնի արհեստական փոփոխման:

Պայմանագրի կողմերից անկախ գործոնների ազդեցությամբ պայմանագրի փոփոխման յուրաքանչյուր դեպք սահմանում է Հայաստանի Հանրապետության կառավարությունը:

8.8 Ապրանքի մատակարարման ժամկետը կարող է երկարաձգվել մինչև պայմանագրով այդ ժամկետը լրանալը Վաճառողի առաջարկության առկայության դեպքում, պայմանով, որ Գնորդի մոտ ի վերացել ապրանքի օգտագործման պահանջը: Ընդ որում սույն կետով սահմանված դեպքում ապրանքի մատակարարման ժամկետը կարող է երկարաձգվել մեկանգամ մինչև 30 օրացուցային օրով, բայց ոչ ավել քան պայմանագրով սահմանված ժամկետն է:

8.9 Պայմանագրի պատշաճ կատարման պայմաններում կողմերի (Վաճառող կամ Գնորդ) օգուտները (խնայողություններ) կամ կրած վնասները տվյալ կողմի օգուտը կամ կրած վնասն են:

Պայմանագրի կողմերի՝ երրորդ անձանց նկատմամբ պարտավորությունները՝ ներառյալ պայմանագրի կատարման շրջանակում Վաճառողի կնքած այլ գործարքները և դրանցից բխող պարտավորությունները, դուրս են պայմանագրի կարգավորման դաշտից և չեն կարող ազդել պայմանագրի կատարման արդյունքն ընդունելու վրա: Այդ գործարքների և դրանցից բխող պարտավորությունների կատարման հետ կապված հարաբերությունները կարգավորվում են այդ գործարքների հետ կապված հարաբերությունները կարգավորող նորմերով, և դրանց համար պատասխանատու է Վաճառողը:

8.10 Պայմանագիրը չի կարող փոփոխվել կողմերի պարտավորությունների մասնակի չկատարման հետևանքով կամ ամբողջությամբ լուծվել կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ բացառությամբ՝ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով պարանքի մատակարարման համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցման դեպքերի: Ընդ որում, պայմանագրի կողմերի՝ պարտավորությունների մասնակի չկատարման կամ ամբողջությամբ լուծման կողմերի փոխադարձ համաձայնությունն անհրաժեշտ է ձեռք բերել նախքան Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով ապրանքի մատակարարման համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցումը:

8.11 Վաճառողի կողմից ստանձնած պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու հիմքով պայմանագիրն ամբողջությամբ կամ մասնակի միակողմանի լուծելու մասին ծանուցումը Գնորդը հրապարակում է www.procurement.am հասցեով գործող ինտերնետային կայքի «Պայմանագրերը միակողմանի լուծելու մասին ծանուցումներ» բաժնում՝ նշելով հրապարակման ամսաթիվը: Վաճառողը, պայմանագիրը միակողմանի լուծելու վերաբերյալ, համարվում է պատշաճ ծանուցված՝ ծանուցումը, սույն կետով սահմանված հրապարակվելու հաջորդող օրվանից:

8.12 Պայմանագրի կապակցությամբ ծագած վեճերը լուծվում են բանակցությունների միջոցով: Համաձայնություն ձեռք չբերելու դեպքում վեճերը լուծվում են դատական կարգով:

8.13 Պայմանագիրը կազմված է <u>5</u> էջից, կնքվում է երկու օրինակից, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ, յուրաքանչյուր կողմին տրվում է մեկական օրինակ: Պայմանագրի N 1, N 2, N 3 և N 3.1 հավելվածները, համարվում են պայմանագրի անբաժանելի մասը:

8.14 Պայմանագրի հետ կապված հարաբերությունների նկատմամբ կիրառվում է Հայաստանի Հանրապետության իրավունքը:

**10. Կողմերի հասցեները, բանկային վավերապայմանները և ստորագրությունները**

| ԳՆՈՐԴ | ՎԱՃԱՌՈՂ |
|---|---|
| ՀՀ Հատուկ քննչական ծառայության աշխատակազմ ՊԿՀ | «Սմարթլայն» ՍՊԸ |
| ք.Երևան, Վ.Վաղարշյան 13ա | ք. Երևան, Վարդանանց 110 |
| Ֆին.նախագործառնական վարչություն | «Հայէկոնոմբանկ» ԲԲԸ |
| Հ/Հ 900011474286 | Հ/Հ 163007031509 |
| ՀՎՀՀ 02589128 | ՀՎՀՀ 01548908 |
| Աշխատակազմի ղեկավար՝ Դ. Սուքիասյան | Տնօրեն Տ.Ղարիբյան |
| ------------------------------ /ստորագրություն/ Կ.Տ | ------------------------------ /ստորագրություն/ Կ.Տ |

# ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԲՆՈՒԹԱԳԻՐ - ԳՆՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ

ՀՀ դրամ

| Ապրանքի | | | | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| հրավերով նախատեսված չափաբաժնի համարը | գնումների պլանով նախատեսված միջանցիկ ծածկագիրը՝ ըստ ԳՄԱ դասակարգման (CPV) | անվանումը և ապրանքային նշանը | արտադրողը և ծագման երկիրը | տեխնիկական բնութագիրը | չափման միավորը | միավորի գինը/ՀՀ դրամ | ընդհանուր գինը/ՀՀ դրամ | ընդհանուր քանակը | Մատակարարման հասցեն | Մատակարարման ենթակա քանակը | Մատակարարման ժամկետը |
| 13 | 30191400 | 13 փաստաթղթերի ոչնչացման սարքեր | Fellowes, Չինաստան | Մասնիկների չափը, մմ: 2x15<br>Գաղտնիության մակարդակը (DIN-32757-1):4<br>Չափերի քանակը 70 գ / մ 2: 17<br>Բեռնման լայնությունը, մմ: 220<br>Զամբյուղի տարողությունը: 45<br>Կտրում արագություն, մմ / վրկ: 54<br>Power, W: 500 մոտորապես<br>Ավտոկանգառն լիքը զամբյուղի դեպքում<br>Բաց դռների ցուցանիշը,<br>լցված զամբյուղ<br>Ծարժիչի չերմաստիճանի ցուցանիշ<br>Աղմուկի մակարդակը, դ: 58 | հատ | 120000 | 120000 | 1 | ք. Երևան, Վաղարշ Վաղարշյան 13ա | 1 | 1-ին եռամսյակ 2018թ. |
| 14 | 30192114 | 14 թանաք կնիքի բարձիկի համար | Flamingo, Հնդկաստան | Թանակ շտամպի տուփի բարձիկների համար, 30մլ./ տարբեր գույներ /: «Flamingo»: | հատ | 190 | 1900 | 10 | ք. Երևան, Վաղարշ Վաղարշյան 13ա | 10 | 1-ին եռամսյակ 2018թ. |
| 19 | 30192160 | 19 շտրիխներ | Tincol, Չինաստան | Ուղղիչ ժապավեն, երկարությունը՝ 6-10մմ, լայնքը՝ 5-6մմ. /սպիտակ ժապավենով/ | հատ | 480 | 1920 | 4 | ք. Երևան, Վաղարշ Վաղարշյան 13ա | 4 | 1-ին եռամսյակ 2018թ. |
| 20 | 30192160 | 20 շտրիխներ | Micai, Չինաստան | Ուղղիչ վրձինով՝ 20-24մլ. Պլաստմասե տարայով /սպիտակ գույն-հեղուկ: | հատ | 200 | 4000 | 20 | ք. Երևան, Վաղարշ Վաղարշյան 13ա | 20 | 1-ին եռամսյակ 2018թ. |
| 22. | 30192230 | 22 սկոչ, երկկողմանի սոսնձված | Packing tape, Չինաստան | Սկոչ՝ երկկողմանի կպչողունակության, լայնությունը՝ 15-20մմ, երկարությունը՝ 10-20մ. (հաստությունը՝ ոչ պակաս 2մմ) | հատ | 60 | 180 | 3 | ք. Երևան, Վաղարշ Վաղարշ | 3 | 1-ին եռամսյակ |

| | | | | | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| | | | | | | | | | րշյան 13ա | | 2018թ. |
| 23 | 30192700 | 23 գրենական պիտույքներ | Desk Organizer, Չինաստան | Սեղանի կոմպլեկտ, մոխրագույն, 11 առարկա՝ 2 գրիչ, 2 մատիտ, ռետին, մկրատ, քանոն 15սմ, սրիչ, կարիչ, կարիչի ասեղ, հակակարիչ, նշումների համար 100 էջ, գրասենյակային դանակ: «TTS» կամ համարժեք: | լրակազմ | 1200 | 6000 | 5 | ք. Երևան, Վաղարշավաղարշյան 13ա | 5 | 1-ին եռամսյակ 2018թ. |
| 24 | 30192710 | 24 սոսնձամատիտ, գրասենյակային | Glue stick, Չինաստան | Սոսինձ չոր, չափագրված 15գր | հատ | 130 | 6500 | 50 | ք. Երևան, Վաղարշավաղարշյան 13ա | 50 | 1-ին եռամսյակ 2018թ. |
| 25 | 30192720 | 25 գծանշիչ | Flamingo, Հնդկաստան | Ընդգծիչ (մարկեր), ֆետրից կամ այլ ծակոտկեն նյութից պատրաստված, ծայրոցով, տափակ ծայրով,4 գույնի: «Flamingo» կամ համարժեք: | հատ | 140 | 16800 | 120 | ք. Երևան, Վաղարշավաղարշյան 13ա | 120 | 1-ին եռամսյակ 2018թ. |
| 26 | 30192740 | 26 թուղթ գունավոր, A4 ձևաչափի | SinAr, Ինդոնեզիա | Թուղթ A4 ֆորմատի գունավոր: Թուղթ սպառողական ձ-աչափերի, ոչ կավճապատ: Նախատեսված է գրելու, տպագրելու – գրասենյակային աշխատանքների համար: Չափերը՝ 210x297մմ,կանաչ, կապույտ կամ դեղին գույների, խտությունը 80գ/մ2: «SinAr» կամ համարժեք: ԳՕՍՏ 6656-76, ISO-9001 – ISO-14001 ստանդարտներին համաձայն ստանդարտի:Փաթեթավորված ֆիրմային թղթափաթեթով կամ տուփերով, յուրաքանչյուրում 500 թերթ: | տուփ | 1500 | 3000 | 2 | ք. Երևան, Վաղարշավաղարշյան 13ա | 2 | 1-ին եռամսյակ 2018թ. |
| 27 | 30197100 | 27 կարիչի մետաղալարե կապեր | KW-Trio, Չինաստան | Չափսը՝ 23/13, տուփի մեջ՝ 1000 հատ, 30-100 էջ կարող կարիչների համար: | տուփ | 480 | 2880 | 6 | ք. Երևան, Վաղարշավաղարշյան 13ա | 6 | 1-ին եռամսյակ 2018թ. |
| 28 | 30197231 | 28 թղթապանակ, պոլիմերային թաղանթ, ֆայլ | Impulse, ՀՀ | Թափանցիկ պոլիմերային թաղանթ, A4 ձևաչափի թղթերի համար, արագակարներին ամրացնելու հնարավորությամբ: 70 միկրոն: | հատ | 14 | 28000 | 2000 | ք. Երևան, Վաղարշավաղարշյան 13ա | 2000 | 1-ին եռամսյակ 2018թ. |
| 29 | 30197234 | 29 թղթապանակ կոշտ կազմով | AIBA RADO, Չինաստան | Ռեգիստր թղթապանակ կոշտ ստվարաթղթե կազմով, համապատասխան չափի կռնակով (ծավալով), մետաղյա ամրացման հարմարանքով, A4 (210x297) մմ ձևաչափի թղթերի համար: Ներսի մակերեսը լամինապատված, հաստությունը 8սմ | հատ | 530 | 26500 | 50 | ք. Երևան, Վաղարշավաղարշյան 13ա | 50 | 1-ին եռամսյակ 2018թ. |
| 30 | 30197234 | 30 թղթապանակ կոշտ կազմով | AN PAI, Չինաստան | Ռեգիստր թղթապանակ կոշտ ստվարաթղթե կազմով, համապատասխան չափի կռնակով (ծավալով), մետաղյա ամրացման հարմարանքով, A4 (210x297) մմ ձևաչափի | հատ | 240 | 12000 | 50 | ք. Երևան, Վաղարշա | 50 | 1-ին եռամսյակ 2018թ. |

| | | | | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| | | | | թղթերի համար: Ներսի մակերեսը լամինացված, հաստությունը 4մմ | | | | | րշյան 13ա | | |
| 32 | 30197327 | 32 կարիչ՝ հատուկ | KW-Trio, Չինաստան | Մեծ, կարիչ գրասենյակային՝ 100 էջ կարելու համար: Օգտագործվող ասեղների քանակը՝100, ասեղի համարը՝23/8: | հատ | 7500 | 22500 | 3 | ք. Երևան, Վաղարշ Վաղարշյան 13ա | 3 | 1-ին եռամսյակ 2018թ. |
| 33 | 30197331 | 33 դակիչ՝ քանոնով | Kangaro, Հնդկաստան | Ծակոտիչ գրասենյակային, երկանցք, 35-36 էջ դակելու համար ;«kangaro» | հատ | 1450 | 7250 | 5 | ք. Երևան, Վաղարշ Վաղարշյան 13ա | 5 | 1-ին եռամսյակ 2018թ. |
| 34 | 30197331 | 34 դակիչ՝ քանոնով | Kangaro, Չինաստան | Ծակոտիչ գրասենյակային, երկանցք 15-20 էջի դակելու համար ; «kangaro» | հատ | 950 | 4750 | 5 | ք. Երևան, Վաղարշ Վաղարշյան 13ա | 5 | 1-ին եռամսյակ 2018թ. |
| 35 | 30197331 | 35 դակիչ՝ քանոնով | Dingli, Չինաստան | Ծակոտիչ գրասենյակային, երկանցք,60-70 էջ դակելու համար, «Dingli» | հատ | 5000 | 15000 | 3 | ք. Երևան, Վաղարշ Վաղարշյան 13ա | 3 | 1-ին եռամսյակ 2018թ. |
| 36 | 30197340 | 36 ապակարիչ | DL, Չինաստան | Գրասենյակային ապակարիչ N10, N24, N26 և N26.6 ասեղներով կարված թղթերը քանդելու համար: Նախատեսված է կարիչով կարված թղթերը քանդելու համար ; «kangaro»կամ համարժեք | հատ | 145 | 2175 | 15 | ք. Երևան, Վաղարշ Վաղարշյան 13ա | 15 | 1-ին եռամսյակ 2018թ. |
| 39 | 30197622 | 39 թուղթ,A4 ֆորմատի /21x29.7/ | Captain, ՌԴ | Թուղթ A4 ֆորմատի: Թուղթ սպառողական ձ–աչափերի, ոչ կավճապատ: Նախատեսված է գրելու, տպագրելու – գրասենյակային աշխատանքների համար: Չափերը 210x297մմ, միատակ – երկտակ թերթերի համար, սպիտակությունը ոչ պակաս քան 90 %, խտությունը 80գ/մ2: «Double A» կամ համարժեք: ԳՕՍՏ 6656-76, ISO-9001 – ISO-14001 ստանդարտներին համաձայն ստանդարտի:Փաթեթավորված ֆիրմային թղթափաթեթով կամ տուփերով, յուրաքանչյուրում 500 թերթ, փաթեթի քաշը՝ 2,5 կգ: | տուփ | 1350 | 1620000 | 1200 | ք. Երևան, Վաղարշ Վաղարշյան 13ա | 1200 | 1-ին եռամսյակ 2018թ. |
| 40 | 30197622 | 40 թուղթ,A4ֆորմատի /21 x29.7/ | Pioneer, Պորտուգալիա | թուղթ A4 , չկավճածէֆկալիպտեթուղթ, օգտագործվումէտպագրմանհամար, թեքինկներչպարունակող, մեխանիկականեղանակովստացված: Խտությունը առնվազն 80 գ/մ2 (առանցշեղումների), չափերը՝ 21.0X29.7 մմ. (առանցշեղումների), առանցփայտայինխեժինգազանմանքըրիպարունա | տուփ | 1725 | 1380000 | 800 | ք. Երևան, Վաղարշ Վաղարշյան 13ա | 800 | 1-ին եռամսյակ 2018թ. |

| | | | | | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| | | | | կության: Նախատեսված՝ միակողմանի և երկկողմանի տպագրության համար: Պիտանի՝ լազերային, թանաքաշիթային և օֆսեթ տպագրության համար: Սպիտակությունը՝ ոչ պակաս 171%-ից (CIE համակարգով) (առանց շեղումների) ուլտրասպիտակ: Պայծառությունը՝ 100%-ից ոչ պակաս, հաստությունը՝ 108մկմ, անթափանցելիությունը՝ 94%-ից ոչ պակաս, անհարթությունը ոչ ավել՝ 180մլ/ր՝, խոնավությունը՝ 3,5-4,5%, օդի անցանելիություն՝ 1700 մլ/ր, գործարանային փաթեթավորմամբ: Մեկ տուփի քաշը՝ 2,5 կգ, տորսիկայնություն՝ ոչ ավել քան 95,3%, ֆենոլի պարունակություն՝ ոչ ավել քան 0,001 մգ/մ3, ֆորմալդեգիդի պարունակություն՝ ոչ ավել քան 0,0014 մգ/մ3 : | | | | | | | |
| 42 | 30197646 | 42 թուղթ՝ A3 ֆորմատի /29,7x42/ | Pioneer, Պորտուգալիա | Չկավճած թուղթ՝ A3 ֆորմատի /29,7x42 սմ./, 110 գրամ մ/2, տուփում՝ 500 հատ, | տուփ | 5200 | 20800 | 4 | ք. Երևան, Վարդաշեն փողոց 13ա | 4 | 1-ին եռամսյակ 2018թ. |
| 43 | 30197647 | 43 թուղթ՝ A3 ֆորմատի /29,7x42/ | Captain, ՌԴ | Չկավճած թուղթ՝ A3 ֆորմատի /29,7x42 սմ./, 80 գրամ մ/2, տուփում՝ 500 հատ, | տուփ | 4000 | 4000 | 1 | ք. Երևան, Վարդաշեն փողոց 13ա | 1 | 1-ին եռամսյակ 2018թ. |
| 44 | 30199281 | 44 ծրար | Libra, ԱՄԷ | Ծրարներ չափանցող Ա6, խիտ թղթից՝ նախատեսված զաղտնիություն պարունակող նամակների համար 1 մ2 մակերեսը՝ 100 գ զանգվածով /սոսնձե շերտով, սոսնձի շերտը՝ պաշտպանիչ սիլիկոնային ժապավենով/, սպիտակ թղթից 11,4x16,2սմ / առանց պատուհանի | հատ | 75 | 15000 | 2000 | ք. Երևան, Վարդաշեն փողոց 13ա | 2000 | 1-ին եռամսյակ 2018թ. |
| 45 | 30199281 | 45 ծրար | Libra, ԱՄԷ | Ծրարներ չափանցող Բ5՝ առանց գրությունների , խիտ թղթից՝ նախատեսված զաղտնիություն պարունակող նամակների համար, 1 մ2 մակերեսը՝ 100 գ զանգվածով /սոսնձե շերտով, սոսնձի շերտը՝ պաշտպանիչ սիլիկոնային ժապավենով/ սպիտակ թղթից, 175 x 250մմ./ առանց պատուհանի | հատ | 18 | 36000 | 2000 | ք. Երևան, Վարդաշեն փողոց 13ա | 2000 | 1-ին եռամսյակ 2018թ. |
| 46 | 30199281 | 46 ծրար | Libra, ԱՄԷ | Ծրարներ չափանցող /եվրո/՝ առանց գրությունների, խիտ թղթից՝ նախատեսված զաղտնիություն պարունակող նամակների համար /սոսնձե շերտով, | հատ | 8 | 12000 | 1500 | ք. Երևան, Վարդաշեն փողոց | 1500 | 1-ին եռամսյակ 2018թ. |

| | | | | | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| | | | | սոսնձիշերտը՝ պաշտպանիչ սիլիկոնային ինժապավենով / սպիտակթղթից, 1մ2 մակերեսը՝ 100 գզանգվածով, 11,5x22,5սմ, առանց պատուհանի | | | | | րշյան 13ա | | |
| 48 | 30199281 | 48 ծրար | Golden Line, ԱՄԷ | Ծրարներ չթափանցող Ա4 դեղին՝ առանցգրությունների, խիտթղթից՝ նախատեսված գաղտնիություն պարունակող նամակների համար /սոսնձեշերտով, սոսնձիշերտը՝ պաշտպանիչ սիլիկոնային ինժապավենով/, 22,5 x 32 սմ, 1մ2 մակերեսը՝ 100գ զանգվածով | հատ | 35 | 7000 | 200 | ք. Երևան, Վաղարշ Վաղարշյան 13ա | 200 | 1-ին եռամսյակ 2018թ. |
| 50 | 30199420 | 50 թուղթ նշումների համար՝ սոսնձվածքով | | Թուղթ գրելու, սոսնձվածքը 1,25մմ-ից ոչ պակաս, սպիտակությունը 75%-ից ոչ պակաս, ԳՕՍՏ 18510-87 կամ համարժեք, փաթեթավորումը՝ ցանկացած տեսքով 76,2x76,2մմ 100էջ դեղին | տուփ | 120 | 6000 | 50 | ք. Երևան, Վաղարշ Վաղարշյան 13ա | 50 | 1-ին եռամսյակ 2018թ. |

**ԳՆՈՐԴ**

ՀՀ Հատուկ քննչական ծառայության աշխատակազմ ՊԿՀ
ք.Երևան, Վ.Վաղարշյան 13ա
Ֆին.նախագործառնական վարչություն
Հ/Հ 900011474286
ՀՎՀՀ 02589128
Աշխատակազմի ղեկավար՝
Դ. Սուքիասյան

/ստորագրություն/
Կ.Տ

**ՎԱՃԱՌՈՂ**

«Սմարթլայն» ՍՊԸ
ք. Երևան, Վարդանանց 110
«Հայ Էկոնոմբանկ» ԲԲԸ
Հ/Հ 163007031509
ՀՎՀՀ 01548908
Տնօրեն
Տ.Ղարիբյան

/ստորագրություն/
Կ.Տ

Հավելված
«12» մարտ 2018թ. կնքված
ՀԲՇ-ԳՀԱՊՁԲ-18/03-1 ծածկագրով պայմանագրի

# ՎՃԱՐՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ

ՀՀ դրամ

| Ապրանքի | | | | | | | | | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| հրավերով նախատեսված չափաբաժնի համարը | գնումների պլանով նախատեսված միջանցիկ ծածկագիրը՝ ըստ ԳՄԱ դասակարգման (CPV) | անվանումը | դիմաց վճարումները նախատեսվում է իրականացնել 2018թ-ին՝ ըստ ամիսների, այդ թվում | | | | | | | | | | | | |
| | | | հունվար | փետրվար | մարտ | ապրիլ | մայիս | հունիս | հուլիս | օգոստոս | սեպտեմբեր | հոկտեմբեր | նոյեմբեր | դեկտեմբեր | Ընդամենը |
| 13 | 30191400 | փաստաթղթերի ոչնչացման սարքեր | 0 | 0 | 0 | 42000 | 42000 | 42000 | 72000 | 72000 | 72000 | 120000 | 120000 | 120000 | 120000 |
| 14 | 30192114 | թանաք կնիքի բարձիկի համար | 0 | 0 | 0 | 665 | 665 | 665 | 1140 | 1140 | 1140 | 1900 | 1900 | 1900 | 1900 |
| 19 | 30192160 | շտրիխներ | 0 | 0 | 0 | 672 | 672 | 672 | 1152 | 1152 | 1152 | 1920 | 1920 | 1920 | 1920 |
| 20 | 30192160 | շտրիխներ | 0 | 0 | 0 | 1400 | 1400 | 1400 | 2400 | 2400 | 2400 | 4000 | 4000 | 4000 | 4000 |
| 22 | 30192230 | սկոչ, երկկողմանի սոսնձված | 0 | 0 | 0 | 63 | 63 | 63 | 108 | 108 | 108 | 180 | 180 | 180 | 180 |
| 23 | 30192700 | գրենական պիտույքներ | 0 | 0 | 0 | 2100 | 2100 | 2100 | 3600 | 3600 | 3600 | 6000 | 6000 | 6000 | 6000 |
| 24 | 30192710 | սոսնձամատիտ, գրասենյակային | 0 | 0 | 0 | 2275 | 2275 | 2275 | 3900 | 3900 | 3900 | 6500 | 6500 | 6500 | 6500 |
| 25 | 30192720 | գծանշիչ | 0 | 0 | 0 | 5880 | 5880 | 5880 | 10080 | 10080 | 10080 | 16800 | 16800 | 16800 | 16800 |

| | | | | | | | | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| 26 | 30192740 | թուղթ գունավոր, A4 ծևաչափի | 0 | 0 | 0 | 1050 | 1050 | 1050 | 1800 | 1800 | 1800 | 3000 | 3000 | 3000 | 3000 |
| 27 | 30197100 | կարիչի մետաղալարե կապեր | 0 | 0 | 0 | 1008 | 1008 | 1008 | 1735 | 1735 | 1735 | 2880 | 2880 | 2880 | 2880 |
| 28 | 30197231 | թղթապանակ, պոլիմերային թաղանթ, ֆայլ | 0 | 0 | 0 | 9800 | 9800 | 9800 | 16800 | 16800 | 16800 | 28000 | 28000 | 28000 | 28000 |
| 29 | 30197234 | թղթապանակ կոշտկազմով | 0 | 0 | 0 | 9221 | 9221 | 9221 | 15900 | 15900 | 15900 | 26500 | 26500 | 26500 | 26500 |
| 30 | 30197234 | թղթապանակ կոշտկազմով | 0 | 0 | 0 | 4200 | 4200 | 4200 | 7200 | 7200 | 7200 | 12000 | 12000 | 12000 | 12000 |
| 32 | 30197327 | կարիչ՝ հատուկ | 0 | 0 | 0 | 7875 | 7875 | 7875 | 13500 | 13500 | 13500 | 22500 | 22500 | 22500 | 22500 |
| 33 | 30197331 | դակիչ՝ քանոնով | 0 | 0 | 0 | 2538 | 2538 | 2538 | 4350 | 4350 | 4350 | 7250 | 7250 | 7250 | 7250 |
| 34 | 30197331 | դակիչ՝ քանոնով | 0 | 0 | 0 | 1663 | 1663 | 1663 | 2850 | 2850 | 2850 | 4750 | 4750 | 4750 | 4750 |
| 35 | 30197331 | դակիչ՝ քանոնով | 0 | 0 | 0 | 5250 | 5250 | 5250 | 9000 | 9000 | 9000 | 15000 | 15000 | 15000 | 15000 |
| 36 | 30197340 | ապակարիչ | 0 | 0 | 0 | 761 | 761 | 761 | 1305 | 1305 | 1305 | 2175 | 2175 | 2175 | 2175 |
| 39 | 30197622 | թուղթ, A4 ֆորմատի /21x29.7/ | 0 | 0 | 0 | 567000 | 567000 | 567000 | 972000 | 972000 | 972000 | 1620000 | 1620000 | 1620000 | 1620000 |
| 40 | 30197622 | թուղթ, A4 ֆորմատի /21x29.7/ | 0 | 0 | 0 | 483000 | 483000 | 483000 | 828000 | 828000 | 828000 | 1380000 | 1380000 | 1380000 | 1380000 |
| 42 | 30197646 | թուղթ՝ A3 ֆորմատի /29,7x42/ | 0 | 0 | 0 | 7280 | 7280 | 7280 | 12480 | 12480 | 12480 | 20800 | 20800 | 20800 | 20800 |
| 43 | 30197647 | թուղթ՝ A3 ֆորմատի /29,7x42/ | 0 | 0 | 0 | 1400 | 1400 | 1400 | 2400 | 2400 | 2400 | 4000 | 4000 | 4000 | 4000 |

| | | | | | | | | | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| 44 | 30199281 | ծրար | 0 | 0 | 0 | 5250 | 5250 | 5250 | 9000 | 9000 | 9000 | 15000 | 15000 | 15000 | 15000 |
| 45 | 30199281 | ծրար | 0 | 0 | 0 | 12600 | 12600 | 12600 | 21600 | 21600 | 21600 | 36000 | 36000 | 36000 | 36000 |
| 46 | 30199281 | ծրար | 0 | 0 | 0 | 4200 | 4200 | 4200 | 7200 | 7200 | 7200 | 12000 | 12000 | 12000 | 12000 |
| 48 | 30199281 | ծրար | 0 | 0 | 0 | 2450 | 2450 | 2450 | 4200 | 4200 | 4200 | 7000 | 7000 | 7000 | 7000 |
| 50 | 30199420 | թուղթ նշումների համար՝ սոսնձվածքով | 0 | 0 | 0 | 2100 | 2100 | 2100 | 3600 | 3600 | 3600 | 6000 | 6000 | 6000 | 6000 |
| Ընդամենը | | | 0 | 0 | 0 | 1183700 | 1183700 | 1183700 | 2029300 | 2029300 | 2029300 | 3382155 | 3382155 | 3382155 | **3382155** |

**ԳՆՈՐԴ**

ՀՀ Հատուկ քննչական ծառայության
աշխատակազմ ՊԿՀ
ք.Երևան, Վ.Վաղարշյան 13ա
Ֆին.նախագործառնական
վարչություն
Հ/Հ 900011474286
ՀՎՀՀ 02589128
Աշխատակազմի ղեկավար՝
Դ. Սուքիասյան

---------------------------------
/ստորագրություն/
Կ.Տ

**ՎԱՃԱՌՈՂ**

«Սմարթլայն» ՍՊԸ
ք. Երևան, Վարդանանց 110
«Հայէկոնոմբանկ» ԲԲԸ
Հ/Հ 163007031509
ՀՎՀՀ 01548908
Տնօրեն
Տ.Ղարիբյան

---------------------------------
/ստորագրություն/
Կ.Տ

| Պայմանագրի կողմ | Պատվիրատու |
|---|---|
| ______________ | ______________ |
| ______________ | ______________ |
| գտնվելու վայրը ______________ | գտնվելու վայրը ______________ |
| հհ ______________ | հհ ______________ |
| ______________ | ______________ |
| հվհհ ______________ | հվհհ ______________ |

# ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N
# ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԿԱՄ ԴՐԱ ՄԻ ՄԱՍԻ ԿԱՏԱՐՄԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ
# ՀԱՆՁՆՄԱՆ-ԸՆԴՈՒՆՄԱՆ

§ ¦§ ¦ 20 Ã.

Պայմանագրի /այսուհետ՝ Պայմանագիր/ անվանումը՝ ______________
Պայմանագրի կնքման ամսաթիվը՝ «____» «______________» 20 թ.
Պայմանագրի համարը՝ __________
Պատվիրատուն՝ ի դեմս ______________ և

Պայմանագրի կողմը՝ ի դեմս ______________, հիմք ընդունելով Պայմանագրի կատարման վերաբերյալ «____» «______________» 20 թ. կազմված՝ գնման հայտը նախագծած ներկայացուցչի N եզրակացությունն այն մասին, որ Պայմանագրով նախատեսված՝ ստորև նշված մատակարարումները համապատասխանում են Պայմանագրով ամրագրված տեխնիկական բնութագրերին և գնման ժամանակացույցին՝ կազմեցին սույն արձանագրությունը հետևյալի մասին.

Պայմանագրի շրջանակներում Պայմանագրի կողմը մատակարարել է հետևյալ ապրանքները՝

| N | Մատակարարված ապրանքների | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|
| | անվանումը | տեխնիկական բնութագրի համառոտ շարադրանքը | քանակական ցուցանիշը | | կատարման ժամկետը | | Վճարման ենթակա գումարը /հազար դրամ/ | Վճարման ժամկետը /ըստ վճարման ժամանակացույցի/ |
| | | | ըստ պայմանագրով հաստատված գնման ժամանակացույցի | փաստացի | ըստ պայմանագրով հաստատված գնման ժամանակացույցի | փաստացի | | |
| | | | | | | | | |
| | | | | | | | | |
| | | | | | | | | |

Վերոհիշյալ մատակարարումների կատարման վերաբերյալ բոլոր հաշիվ-ապրանքագրերը հանդիսանում են սույն արձանագրության բաղկացուցիչ մասը և կցվում են:

| Ապրանքը հանձնեց | Ապրանքն ընդունեց |
|---|---|
| ______________ | ______________ |
| ստորագրություն | ստորագրություն |
| ______________ | ______________ |
| ազգանուն, անուն | ազգանուն, անուն |
| Կ.Տ. | Կ.Տ. |

*Հավելված 3.1*
*«12» մարտ 2018թ. կնքված*
*ՀԶՇ-ԳՀԱՊՁԲ-18/03-1 ծածկագրով պայմանագրի*

ԱԿՏ N__

պայմանագրի արդյունքը Գնորդին հանձնելու փաստը ֆիքսելու վերաբերյալ

Սույնով արձանագրվում է, որ ____________-ի (այսուհետ՝ Գնորդ) և ____________________
Գնորդի անվանումը Վաճառողի անվանումը
(այսուհետ՝ Վաճառող) միջև 20 թ. ____________________ -ին կնքված N________________
___
պայմանագրի կնքման ամսաթիվը պայմանագրի համարը

պայմանագրի շրջանակներում Վաճառողը 20 թ. ____________-ին հանձնման-ընդունման նպատակով Գնորդին հանձնեց ստորև նշված ապրանքները.

| Ապրանքի | | |
|---|---|---|
| անվանումը | չափման միավորը | քանակը (փաստացի) |
| | | |
| | | |

Սույն ակտը կազմված է 2 օրինակից, յուրաքանչյուր կողմին տրամադրվում է մեկական օրինակ:

ԿՈՂՄԵՐԸ

| **Հանձնեց** | **Ընդունեց**<br>հայտը նախագծող ներկայացուցիչ |
|---|---|
| ____________________<br>ազգանուն, անուն | ____________________<br>ազգանուն, անուն |
| ____________________<br>Ստորագրություն | ____________________<br>ստորագրություն |